110. *Մատ. Ս. Էջմ. № 1180/1526 (Կար.). Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի ի Ներսիսէ Լամբրոնացւոյ. բուղթ. 50½×33½ սմ., թերթ, 906։ ԳԻՐ. Խոշոր, արևելեան բոլորգիր (երկաթագրախառն ձևերով), երկիջեան 40½×10½ սմ.։ ՍՏԱՑՈՂ. Համազասպ Մամիկոնեան Յովհաննայ վանից. ԺԱՄԱՆԱԿ. 1924 թ. Փրկչական. «ՉԽԴ» Հայոց։*

Նկարուած է 309ա., բնագիրը և մեր նկարը նոյն մեծութեամբ։

111. *Մատ. Ս. Էջմ. № 157/180. Աստուածաշունչ Հեթում Բ. ի, պատկերազարդ։ Մազաղաթ, նուրբ, փափուկ և ազնիւ, 22×16 սմ., թերթ 576.։ ԳԻՐ տարի փոքրատեսակ բոլորգիր, երկիջեան 18,2×5,2 սմ.։ ԳՐԻՉ. Ստեփաննոս (կարծում ենք Ստեփաննոս Գոյներիցանց)։ Ստացող. Հեթում Բ. Թագաւոր Հայոց. «Զբարեպաշտ արքայն Հայոց զՀեթում զեկեղեցւոյ ա՞յ բարձրացուցանաւղն և զվարժեալն ա. իմաստութե՞ց, յիշման արժանի արարէք զսա, ով ոք ընթեռնոյք զսա կամ աւրինակէք. զի ստացաւ զսա յիշատակ իւր և ծնողաց իւրոց յաստիս և յապառնումն» 47բ.։ Ժամանակ. 1295 թ. Փրկչական. «Թուակ.» ՉԽԴ դրեցաւ 575բ.։*

Ծանօթ. Ձեռագիրը զարդարուած է ճոխ մանրանկարներով. շատերի ուրուագիծը միայն քաշած։ Գրքերի սկզբնագիրը մանրանկարչական (Թրոչ, նագիր, մարդագիր ևն), առաջին տողը երկաթագիր՝ ոսկով։ Պարբերութիւնների և տների գլխագրերը, «ա՞ծ», «տ՞ր ա՞ծ», «յ՞ս», «ք՞ս» իրենց հոլովումներով նոյնպէս ոսկէգիր։ Ցանկերի մէջ, գլխաւորապէս վերնագիրները կարմրագեղով, շատ հազիւ նաև կանաչ 534ա բ.։ Ձեռագիրն ընդհանրապէս մանր բոլորգրով է, բայց նախադրութիւնների մէջ շատ աւելի մանր, թէև զարմանալի կանոնաւորութեամբ։

Նկարուած է 147ա., բնագիրը և գրեթէ մեր նկարը նոյն մեծութեամբ։

112. *Մատ. Ս. Էջմ. № 526/177 (Կ. 513). Հոկաճառութիւն ընդդէմ երկբնակաց Յովհաննու Սարկաւագ վարդապետին, թերի։ Թուղթ. հաստ, 25×16 սմ., 131 թերթ։ ԳԻՐԸ Խոշոր, արևելեան անցման բոլորգիր (երկաթագրից) միջեան 18½×10 սմ.։ ԳՐԻՉ, ՍՏԱՑՈՂ, ԺԱՄԱՆԱԿ. անյայտ։ Հնագրական տեսակէտով ԺԳ. դարու գործ։*

Նկարուած է յիշատակարանից 51բ., բնագիրը 7½×9,7, Լուսանկարը նոյն մեծութեամբ։

113-114. *Պատառիկ, Fragment) Տ. Խաչիկ ծ. վարդապետի. մազաղաթ, մեծ երկաթագրով, ձայնանիշներով Շարական։ Գրին և պատկերին նայելով ԺԳ. դարու առաջին կիսի գործ։*

Մինչև այժմ երկաթագիր շարական գտնուած չէ ուստի և այս պատառիկները արժէքաւոր։

1ա. Բուն գիրը 9×10 սմ., մեր նկարը 6×7 սմ.։

1բ. Բնագիրը 14½×9 սմ, մեր նկարը, 10×5,8 սմ.։

115. *Մատ. Ս. Էջմ. № 237/379 (Կ. 230). Աւետարան, թուղթ 34,3×24½ սմ. թերթ 190։ ԳԻՐ. Հետաքրքրական բոլորգիր, արևելեան։ ԳՐԻՉ. ՏԵՂ, ԺԱ-*